HELP HUMAN RIGHTS EDUCATION FOR LEGAL PROFESSIONALS

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Առցանց դասընթաց իրավական և առողջապահական ոլորտների մասնագետների համար՝ կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների առանցքային սկզբունքների վերաբերյալ

Նախապատմությունը և նպատակը

Կենսաբանության և բժշկության, այդ թվում նաև նոր տեխնոլոգիաների զարգացման արդյունքում նշանակալի առաջընթաց է արձանագրվել առողջապահության ոլորտում: Սակայն այդ զարգացումներն ի հայտ են բերում էթիկական հարցեր, որոնք ազդում են անհատի և անհատի իրավունքների ու արժանապատվության պաշտպանության վրա:

Այս էթիկական և հաճախ նաև իրավական հարցերը ծագում են ամենատարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ բժշկական միջամտության ենթարկվելու համաձայնությունը, առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ իմանալու իրավունքը, արհեստական բեղմնավորումը, օրգանների և հյուսվածքների նվիրաբերություն և փոխպատվաստումը և այլն:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության համակարգն արձագանքել է այս զարգացումներին տարբեր ձևերով՝

- Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիան (Օվիդեոյի կոնվենցիա) ընդունվել է 1997 թվականին: Դրա դրույթները հետագայում մշակվել և լրացվել են առանձին խնդիրների վերաբերյալ լրացուցիչ արձանագրություններով:
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է բազմաթիվ գործեր նշյալ հարցերից մի քանիսի վերաբերյալ՝ հենվելով Օվիդեոյի կոնվենցիայի վրա:
- Կան նաև Կենսաէթիկայի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի հանձնաժողովների և մարմինների կողմից ընդունված ոչ պարտադիր իրավական գործիքներ, որոնք վկայակոչվում են միջազգային մակարդակում:

Դասընթացի նպատակն է անդրադառնալ այս հարցերին, ինչպես նաև իրավական և առողջապահական ոլորտների մասնագետներին ավելի սերտ հաղորդակից դարձնել համապատասխան իրավական փաստաթղթերին և գործիքներին այնպիսի ձևաչափով, որով հաշվի կառնվի նրանց առօրյա աշխատանքի ծանրաբեռնվածությունը: Մասնավորապես, այն նպատակ ունի աջակցել իրավական և առողջապահական ոլորտների մասնագետներին՝ հասկանալու մարդու իրավունքների առանցքային սկզբունքները, որոնք վերաբերում են կենսաբժշկության ոլորտում իրենց աշխատանքին:

Թեմաներն ուսումնասիրվում են գործնական եղանակով՝ օգտագործելով տեսանյութեր, ինտերակտիվ էկրաններ, իրավիճակային դեպքերի ներկայացումներ, գիտելիքների ստուգման թեստեր և մտորելու վարժություններ:

Դասընթացում ներառված է տերմինների բառարան, որտեղ բացատրված են ուսուցման ընթացքում անհրաժեշտ հիմնական գաղափարները և հասկացությունները: Տերմինների բառարանը հասանելի է դասընթացի ամբողջ ընթացքում:

Դասընթացը մշակվել է 2018 թվականին:

Թիրախային լսարանը

Այս դասընթացն ունի երկու հիմնական թիրախ լսարան՝

- առողջապահական ոլորտի մասնագետներ և
- իրավական ոլորտի մասնագետներ

Այն կարող են օգտագործել որպես ուսուցողական նյութ նաև այլ կատեգորիայի օգտատերերը, ինչպես՝ բժշկության և իրավագիտության ոլորտների ուսանողները, մարդու իրավունքների պաշտպանության պետական հաստատությունների անձնակազմը, և այլ խմբերի ու անհատների կողմից, որոնք կոնկրետ հետաքրքրություններ ունեն կենսաբժշկության մեջ մարդու իրավունքների ոլորտում:

Դասընթացի պլանը (8 մոդուլ)

1. **Ներածություն** (սահմանումներ, միջազգային իրավական շրջանակ, սկզբունքներ)
2. **Ազատ և տեղեկացված համաձայնություն** (սահմանում, մերժում կամ հրաժարում, ազատ և տեղեկացված համաձայնության տարրերը և սահմանափակումները)
3. **Բժշկական գաղտնիություն և առողջության վերաբերյալ տվյալների պաշտպանություն** (առողջության վերաբերյալ տվյալների, իրավական շրջանակի, պացիենտի համաձայնության, առողջության վերաբերյալ տվյալների գաղտնիության իրավունքի սահմանափակումների, առողջապահական ոլորտի մասնագետների կողմից տվյալների մշակում, պացիենտի համար իր առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների հասանելիության իրավունքի սահմանում)
4. **Սաղմի և բեղմնավորման պաշտպանություն** (հիմնական տեսակետները սաղմի կարգավիճակի, արհեստական բեղմնավորման մեթոդների, վերարտադրողական կլոնավորման արգելման և նախածննդյան ախտորոշման վերաբերյալ)
5. **Կյանքի ավարտ** (ներածություն, իրավական շրջանակ, որոշումների կայացում կյանքի ավարտի իրավիճակներում, բուժում ստանալու համաձայնությունից հրաժարում, արհեստական սնուցում, նախկինում արտահայտած ցանկություններ, պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն)
6. **Գենետիկական հետազոտություն** (ներածություն, գենետիկական թեստերի տարբեր տեսակներ, սահմանափակումներ, սկզբունքներ և կանոններ, գենետիկական թեստեր և անձնական տվյալներ, համաձայնություն տալու կարողություն չունեցող անձանց պաշտպանություն, անմիջապես սպառողին առաջարկվող գենետիկական թեստեր, գենետիկական տվյալներ և ապահովագրության նպատակներ)
7. **Կենսաբժշկական հետազոտություններ** (սահմանում, իրավական սկզբունքներ, էթիկական սկզբունքներ, իրավական շրջանակ, տեղեկատվություն և համաձայնություն, անվտանգություն՝ բուժում և նոր զարգացումներ, տեղեկատվություն և գաղտնիություն)
8. **Մարդկային օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում** (սահմանումներ, էթիկական և իրավական հարցեր, իրավական շրջանակ, ընդհանուր սկզբունքներ, ողջ մարդուց օրգանի կամ հյուսվածքի հեռացում, մահացած մարդուց օրգանի կամ հյուսվածքի հեռացում)

Դասընթացի մշակումը և իրականացումը

Այս դասընթացը համատեղ մշակել են Իրավական ոլորտի մասնագետների համար Մարդու իրավունքների կրթության (HELP) եվրոպական ծրագիրը և Եվրոպայի խորհրդի Կենսաէթիկայի բաժինը: Ձեր լեզվով հասանելիությունը ստուգելու համար այցելեք մեր էլեկտրոնային ուսուցման հարթակ:

Առցանց դասընթացի հասանելիությունը

Անգլերեն լեզվով դասընթացն անվճար հասանելի է HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում՝ http://help.elearning.ext.coe.int/: Դրանից օգտվելու համար անհրաժեշտ է բացել HELP հաշիվ, եթե մինչև այժմ չեք բացել (2 րոպե):